ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/11

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21786-2019 գրությամբ Ա/Ձ Աբգար Ավետիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու՝ Պատվիրատու) 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3027-2019 գրության հիման, վրա 30.12.2019թ. թիվ 26/26-1/21786-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Աբգար Ավետիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Աբգար Ավետիսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Աբգար Ավետիսյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Աբգար Ավետիսյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/10 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3027-2019 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 գնման պայմանագրի 2.1.7.1 կետերի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 25-ին միակողմանի մասնակի լուծել է N ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 պայմանագիրը և կից համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ գրությունը 26.12.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/11 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև 01.03.2019թ. կնքվել է ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ա/Ձ Աբգար Ավետիսյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.Պատվիրատուի կողմից 26.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/3-5» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21786-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3027-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև 01.03.2019թ. կնքվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ վերջինս պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև 01.03.2019թ. կնքված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 ծածկագրով պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև 17.04.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը (հետայսու՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի Հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ մատակարարումն պետք է իրականացվի 2019թ, ըստ ամիսների՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին, մասնավորապես՝

- Մուրաբա- օգոստոս -5500կգ, սեպտեմբեր-5656կգ, ընդամենը՝ 11156կգ
- Մարինացված վարունգ (1լ-ոց) – հունիս-օգոստոս յուրաքանչյուր ամսին - 4100կգ, սեպտեմբեր- 4355կգ, ընդամենը՝ 16655կգ
- Մարինացված վարունգ (3լ-ոց) – օգոստոս - 15 000կգ, սեպտեմբեր - 14215, ընդամենը՝ 29215կգ:

Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ 30.08.2019թ. կնքվել է 1300 կգ մուրաբայի, 12100կգ մարինացված վարունգի մասով մասնակի լուծելու մասին համաձայնագիր, որի արդյունքում N 1 համաձայնագրի ընդհանուր գինը կազմել է 16 261 609 ՀՀ դրամ, իսկ մատակարարումների քանակը ըստ Համաձայնագրի հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, հետևյալն է՝

- Մուրաբա- օգոստոս-4850կգ, սեպտեմբեր-5006կգ, ընդամենը՝ 9856կգ
- Մարինացված վարունգ (1լ-ոց) – հունիս-հուլիս յուրաքանչյուր ամսին - 4100կգ, օգոստոս- 900կգ, սեպտեմբեր - 1155կգ, ընդամենը՝ 10255կգ
- Մարինացված վարունգ (3լ-ոց) – օգոստոս – 12150կգ, սեպտեմբեր - 11365, ընդամենը՝ 23515կգ:

Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ 19.11.2019թ. կնքվել է 1500 կգ մուրաբայի մասով մասնակի լուծելու մասին համաձայնագիր, որի արդյունքում N 1 համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 15 330 304 ՀՀ դրամ, իսկ մատակարարումների քանակը ըստ Համաձայնագրի հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, հետևյալն է՝

- Մուրաբա- օգոստոս-4850կգ, սեպտեմբեր-3506կգ, ընդամենը՝ 8356կգ
- Մարինացված վարունգ (1լ-ոց) – հունիս-4100կգ, հուլիս- 4100կգ, օգոստոս- 900կգ, սեպտեմբեր - 1155կգ, ընդամենը՝ 10255կգ

- Մարինացված վարունգ (3լ-ոց) – օգոստոս– 12150կգ, սեպտեմբեր - 11365, ընդամենը՝ 23515կգ:

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի վարչության պետը 20.12.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՋՈՒ ԳՇ պետը առ 06.12.2019թ. թիվ 3733/ԳՇ գրությամբ և ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված առ 07.10.2019թ. թիվ 2850/ԳՇ զեկուցագրով առաջարկել է միակողմանի մասնակի լուծել ՀՀ ՊՆ և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/3-5 պայմանագիրը՝ ս.թ օգոստոս ամսվա չմատակարարված մարինացված վարունգ 1լ ապրանքատեսակը 44.26կգ (97 օր ուշացում), սեպտեմբեր ամսվա չմատակարարված 1155կգ (67 օր ուշացում) քանակների մասով և հայտնել է, որ վերոնշյալ չմատակարարված քանակների ընդունման գործընթացը կասեցվել է:

Ամփոփելով հայտնել է, որ հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները, առաջարկում է հանձնարարել ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչությանը միակողմանի մասնակի լուծել վերոնշյալ պայմանագիրը չմատակարարված քանակների մասով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Ա/Ձ Աբգար Ավետիսյանին ուղղված 25.12.2019թ. թիվ ԴՎԱ/5698 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև կնքված Պայմանագրի N 1 համաձայնագրի շրջանակներում վերջինս 2019թ. օգոստոս ամսին չի մատակարարել 44.26կգ և սեպտեմբեր ամսին 1155կգ մարինացված վարունգ 1լ ապրանքատեսակը:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 25-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և կից համաձայնագիրը:

Պատվիրատուի կողմից 26.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/3-5» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին***

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>40 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ Ա/Ձ Աբգար Ավետիսյանն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 01.03.2019թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ հունիս-4100կգ, հուլիս-4100կգ, օգոստոս-900կգ, սեպտեմբեր-1155կգ մարինացված վարունգ (1լ-ոց) ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ Ա/Ձ Աբգար Ավետիսյանը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ ***25.12.2019թ***., չի մատակարարել Պայմանագրով նախատեսված քանակությունից 2019թ. օգոստոս ամսին 44,26կգ և սեպտեմբեր ամսին 1155կգ /մարինացված վարունգ/ ապրանքը և ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 40 օրից ավելի, որի հետևանքով վերջինս թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Աբգար Ավետիսյանն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21786-2019 գրությամբ Ա/Ձ Աբգար Ավետիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Աբգար Ավետիսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**